Public Disclosure Authorized
Public Disclosure Authorized
Public Disclosure Authorized
Public Disclosure Authorized

Հայաստանի անտառային լանդշաֆտի վերականգնման փաստաթուղթ

Ամփոփագիր

THE WORLD BANK
IBRD • IDA | WORLD BANK GROUP

Հունիս, 2023թ

Հայաստանի անտառային լանդշաֆտի վերականգնման փաստաթուղթ

Ամփոփագիր

Հունիս, 2023թ

© 2023 Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ
1818 H Street NW
Washington DC 20433
Հեռախոս՝ 202-473-1000;
Կայք՝ www.worldbank.org

Այս փաստաթուղթը Համաշխարհային բանկի խմբի աշխատակիցների աշխատանքի արդյունքն է: Փաստաթղթում արտահայտված բացահայտումները, մեկնաբանությունները և եզրակացությունները պարտադիր չէ, որ արտացոլեն Համաշխարհային բանկի, նրա գործադիր տնօրենների խորհրդի կամ նրանց կողմից ներկայացվող կառավարությունների տեսակետները:

Համաշխարհային բանկը չի երաշխավորում սույն աշխատությունում ներառված տվյալների ճշգրտությունը, ամբողջականությունը կամ արժեքը և պատասխանատվություն չի կրում որևէ սխալ տեղեկության, բացթողման կամ անհամապատասխանության համար, կամ պարտավորություն՝ ներկայացված տեղեկատվության, մեթոդների, գործընթացների կամ եզրակացությունների օգտագործման և կամ չօգտագործման իմաստով: Սույն աշխատության մեջ որևէ քարտեզի վրա ցուցադրված սահմանները, գույները, անվանումները և այլ տեղեկությունները չեն ենթադրում Համաշխարհային բանկի որևէ դատողություն որևէ տարածքի իրավական կարգավիճակի կամ սահմանների հաստատման և կամ ընդունման վերաբերյալ:

Սույն փաստաթղթում ոչինչ չպետք է լինի կամ մեկնաբանվի կամ համարվի Համաշխարհային բանկի արտոնությունների և անձեռնմխելիության սահմանափակում կամ հրաժարում, որոնք հատուկ վերապահված են:

Իրավունքներ և թույլտվություններ

Այս աշխատանքի նյութը պաշտպանված է հեղինակային իրավունքով: Քանի որ Համաշխարհային բանկը խրախուսում է իր գիտելիքների տարածումը, այս աշխատանքը կարող է ամբողջությամբ կամ մասամբ վերարտադրվել ոչ առևտրային նպատակներով, եթե լիարժեք հղում է տրվում դրան:

Խնդրում ենք այս փաստաթղթին հղում տալ հետևյալ կերպ. Համաշխարհային բանկ, 2023 թ., Հայաստանի լանդշաֆտի վերականգնման փաստաթուղթ: © Համաշխարհային Բանկ»:

Իրավունքների և լիցենզիաների, այդ թվում նաև հեղինակային երկրորդական իրավունքների վերաբերյալ բոլոր հարցերը պետք է ուղղվեն Համաշխարհային բանկի հրապարակումներին՝ The World Bank Group, 1818 H Street NW, Washington, DC 20433, USA, ֆաքս՝ 202-522-2625, էլ. փոստ՝՝ pubrights@worldbank.org

Գրաֆիկական դիզայն՝ Վլադիմիր Միրզոև
Շապիկի նկար՝ Գոշի լիճ, Հայաստան, @wirestock-ի կողմից, Freepik.com

Բովանդակություն

Երախտագիտություն 1

Ամփոփագիր 2

Հիմնական Խնդիրներ 3

Առաջնահերթություններ 4

Երախտագիտություն

Այս քաղաքականության փաստաթուղթը մշակել է Համաշխարհային բանկի թիմը՝ ընդգրկելով **Ռաջեշ Կոիրալանին** (բնապահպանական ավագ մասնագետ), **Մադհավի Մ. Պիլային** (բնական ռեսուրսների կառավարման ավագ մասնագետ), **Ելենա Ստրուկովա Գոլուբին** (բնապահպանական հարցերի ավագ տնտեսագետ), **Իրինա Ղափլանյանին** (կլիմայի փոփոխության հարցերի ավագ մասնագետ), **Յուրգեն Բլեյսերին** (խորհրդատու), **Մայլս Մքդոնահին** (խորհրդատու), **Սեպուլ Բարուային** (խորհրդատու) և **Արեգ Կարապետյանին** (խորհրդատու):

Թիմը երախտապարտ է գրախոս-փորձագետ **Թիմոթի Բրաունին** (բնական ռեսուրսների կառավարման ավագ մասնագետ): Թիմը նաև շնորհակալ է **Կարոլին Գեգինաթին** (հայաստանյան գրասենյակի ղեկավար), **Սամեհ Նագիբ Վահբային** (Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի կայուն զարգացման տարածաշրջանային տնօրեն), **Պաուլա Ագոստինիին** (բնական ռեսուրսների կառավարման առաջատար մասնագետ) և Սանջայ Սրիվաստավային (պրակտիկայի ղեկավար Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում շրջակա միջավայրի կայուն զարգացման դեպարտամենտում) անգնահատելի առաջնորդության և աջակցության համար: Թիմը նաև շնորհակալություն է հայտնում Լին **Վան Նգուենին** (ծրագրի ավագ օգնական), **Գրեյս Ագիլարին** (ծրագրի օգնական)՝ ցուցաբերած վարչական աջակցության համար և **Նիգարա Աբատին** (ET խորհրդատու)՝ խմբագրական աջակցության համար:

Թիմը խորին շնորհակալություն է հայտնում ՀՀ կառավարության այն պաշտոնյաներին, որոնք այս աշխատանքին աջակցել են իրենց գիտելիքներով ու պատկերացումներով, ինչպես նաև թիմին տրամադրած տվյալների միջոցով: Թիմը շնորհակալություն է հայտնում շրջակա միջավայրի նախարարության ղեկավարությանն ու աշխատակազմին, մասնավորապես՝ անտառային քաղաքականության վարչությանը, «Հայանտառ» ՊՈԱԿ-ին և Անտառային կոմիտեին արժեքավոր ներդրումների և արձագանքների համար: Թիմը շնորհակալություն է հայտնում բազմաթիվ գործընկերներին, որոնք տրամադրեցին իրենց գիտելիքները և օգնեցին ձևավորելու այս զեկույցի բովանդակությունն ու վերջնական քաղաքականության առաջարկությունները:

Այս աշխատանքը հնարավոր չէր լինի առանց Կլիմայի աջակցության գործիքի (CSF), Ազգային մակարդակով սահմանված ներդրումների գործընկերության և PROGREEN-ի ֆինանսական աջակցության:

Ամփոփագիր

Այս փաստաթուղթն ամփոփում է մի շարք զեկույցներ, որոնք կազմել է Համաշխարհային բանկը ՀՀ կառավարությանն աջակցելու շրջանակներում: Դրանք ուղղված են լանդշաֆտի վերականգնման հնարավորությունների գնահատմանը և մանրամասն նկարագրում են անտառային ոլորտում առկա հնարավորություններն ու մարտահրավերները: Փաստաթուղթը մշակվել է խորհրդատվական գործընթացի միջոցով և նպատակ ունի բոլոր շահագրգիռ կողմերին տեղեկացնել անտառային ոլորտի ներկայիս վիճակի և հետագա բարելավման հնարավորությունների մասին:

Հայաստանը սակավանտառ երկիր է. տարածքի միայն 11,2%-ն է (334,100 հեկտար (հա)) անտառապատ և կենտրոնացած է երեք մարզերում[1]՝ հյուսիսում՝ Տավուշում և Լոռիում, և հարավում ՝ Սյունիքում: Անտառի գերակշռող տեսակը բնական, լայնատերև լեռնային անտառն է՝ սոճու փոքր տարածքով: Անտառների վիճակի, ծավալի, որակի, առողջական և բերքի ծավալների գնահատականները շատ տարբեր են՝ կախված տվյալների աղբյուրներից և կիրառվող մեթոդաբանությունից: Փայտի սպառման տվյալներից ելնելով՝ բերքահավաքի ծավալները պետք է շատ ավելի մեծ լինեն, քան պաշտոնապես հաղորդվում է, մինչդեռ անտառների աճը ներկայիս պաշտոնական գնահատականներից ցածր է: Այս անհամապատասխանությունները զուգորդված են անտառային տնտեսության սահմանափակ կառավարման հետ և սրվում են հրդեհների ու անվերահսկելի արածեցման հետևանքով, ինչը նշանակում է, որ անտառների կայուն օգտագործումն ակնհայտորեն հեռու է երաշխավորված լինելուց:

Անտառային տնտեսությունը կարող է ավելի շատ նպաստել Հայաստանին, եթե հաշվի առնենք նրա հարուստ կենսաբազմազանությունը և սոցիալական, տնտեսական ու մշակութային ծառայությունների ներուժը: Քանի որ տարածքի միայն 11,2%-ն է (334,100 հա) ծածկված է անտառով և առկա է հողերի դեգրադացիայի նշանակալի մակարդակ, անտառային հողերի վերականգնումը (ԱՀՎ) մեծ ներուժ ունի: Մինչև 2030 թվականը 50,000 հա տնկելը (12,9% անտառածածկույթ) օգտակար միջանկյալ թիրախ է՝ հասնելու Բոննի մարտահրավերի շրջանակներում հայտարարված վերջնական նպատակին՝ մինչև 2050 թվականը անտառածածկույթի 20%-ին:[2] Սակայն դեգրադացման ճնշումները պահպանվում են, և էներգիայի արժեքի վերջին բարձրացումը հավելյալ ճնշում կգործադրի ռեսուրսի վրա: Անտառների լանդշաֆտի վերականգնման (ԱԼՎ) վերջին համապարփակ ուսումնասիրությունները բարձր արժանահավատություն ունեցող ճանապարհային քարտեզ և գործողությունների ծրագիր են ապահովում, ինչը շահագրգիռ կողմերի լայն խորհրդակցության արդյունք է: Ռազմավարության շրջանակներում ներկայացվող ոլորտային ներդրումները խիստ աշխատատար են, և հետքովիդյան վերականգնման շրջանում պոտենցիալ եռակի հաղթանակ են ապահովում՝ ուժեղացված գյուղական զարգացման, կենսաբազմազանության պաշտպանության և կլիմայական օգուտների տեսքով (թե՛ մեղմացում, և թե ՛ հարմարվողականություն):

[1] Հայաստանը բաժանված է 11 վարչատարածքային միավորների: Դրանցից 10-ը շրջաններ են, որոնք հայտնի են որպես մարզեր և Երևանը՝ ՀՀ առանձին մարզի կարգավիճակով: Կարևոր է նշել, որ անառային ծածկույթի մասին տվյալները հիմնվում են անտառների վերջին գույքագրման վրա, որն իրականացվել է 1993 թ. (Աղբյուր՝ Շրջակա միջավայրի նախարարություն - ՇՄՆ):

[2] Այս նպատակն ի սկզբանե նշվել է ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիային (UNFCCC) Հայաստանի առաջին ազգային հաղորդագրության մեջ (Աղբյուր՝ ՇՄՆ):

Այս փաստաթղթի նպատակն է ընթացող բարեփոխումների լույսի ներքո Հայաստանի հետ ուժեղացնել երկխոսությունը անտառային ոլորտի վերաբերյալ և ուսումնասիրել, թե ինչպես կարող է երկիրը հակադարձել լանդշաֆտի դեգրադացիային և ավելացնել իր ներդրումը համավարակին հաջորդած շրջանում տնտեսության վերականգնման համար: Ենթադրվում է, որ անտառի յուրաքանչյուր հեկտարը տարեկան միջինը ապահովում է 417 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեք էկոհամակարգային մի շարք ծառայություններից[3] (կամ տարեկան 138 միլիոն ԱՄՆ դոլար): Փաստաթուղթը ներկայացնում է ակնարկ ոլորտի մասին՝ ընդգծելով այդ էկոհամակարգային ծառայությունները և ուրվագծելով արժեքների հոսքի հետագա մեծացման հնարավորությունները, այդ թվում՝ աշխատատեղերի ավելացումը և անտառների հետ կապված ապրուստի միջոցները: Նախքան առաջարկությունների համառոտ ցանկի տրամադրումը այս փաստաթուղթը ներկայացնում է դեգրադացիայի գլխավոր գործոնները, ինչպես նաև անտառային ոլորտի կարևորությունը կլիմայի փոփոխության մեղմացման տեսանկյունից:

Հիմնական խնդիրներ

Անտառները բախվում են էական մարտահրավերների: Ըստ առկա տվյալների՝ անտառների մինչև 70%-ը դեգրադացված է: Անտառների դեգրադացիայի և անտառահատման անմիջական պատճառներն են՝ գյուղատնտեսության մուտքը անտառային հողեր և խոշոր ու մանր եղջերավոր կենդանիների արածեցումը անտառային հողերում, գյուղական բնակչության մեծ կախվածությունը անտառներից, այդ թվում նաև վառելափայտի և ոչ փայտանյութային անտառային մթերքի անկայուն հավաքը, անտառային հողերի փոխակերպումը այլ հողօգտագործման, այդ թվում նաև ենթակառուցվածքների և տեղանքի զարգացումը, հանքարդյունաբերությունը և այլն, ինչպես նաև վնասատուների, հիվանդությունների և հրդեհների վնասների աճը, որոնք սրվում են կլիմայի փոփոխության հետևանքով: Անուղղակի գործոնները ներառում են ընդհանուր բնակչության՝ անտառների կայուն կառավարման կարևորության մասին իրազեկության բացակայությունը և անտառային կանոնակարգերի ու էներգիայի այլընտրանքային, մատչելի աղբյուրների կիրարկման բացակայությունը:

Ոլորտային քաղաքականությունները կարող են ճշգրտվել՝ ԱՀՎ-ի պահանջվող աճին նպաստելու համար: Մինչև 2030 թվականը 50,000 հա տարածքը վերականգնելու Բոննի մարտահրավերին դիմակայելը խնդրահարույց է անտառների պլանավորման և կառավարման սովորական մոտեցման պայմաններում: Անտառային պետական մարմինները ֆիզիկական սարքավորումներ, այլ ենթակառուցվածքներ և կարողություններ չունեն, որոնք անհրաժեշտ են կլիմայի հարմարվողականության, ԱՀՎ-ի և տնկարանների կառավարման համար: Անտառների համագործակցային կառավարումը և դրան աջակցող սկզբունքները կարող են բարելավել տեղական անձնակազմի և ղեկավարների աշխատանքը: Նշված մարտահրավերները հաղթահարելու համար առաջնահերթություն կարելի է տալ այնպիսի աջակցությանը, որը միտված կլինի հետևողական և պարզեցված կարգավորող մեխանիզմների մշակմանը:

3 Արժեքի փոխանցման մեթոդն օգտագործվում է էկոհամակարգային ծառայությունների արժեքը գնահատելու համար: Գնահատվում են 10 էկոհամակարգային ծառայություններ՝ վառելափայտ, ջուր, բուժիչ բույսեր, վայրի մրգեր, սունկ, մեղր, բնական միջավայրի/տեսակների պաշտպանություն, հիդրոլոգիական կարգավորում, ջերմոցային գազերի հեռացում և ռեկրեացիա: Էկոհամակարգային այլ ծառայությունների արժեքը հնարավոր չէ գնահատել անհրաժեշտ տվյալների բացակայության պատճառով:

Առաջնահերթություններ

Խորհուրդ է տրվում պաշտոնական ընթացք տալ և հաստատել լանդշաֆտների վերականգնման ազգային ռազմավարությունը[4]: Համաշխարհային բանկի պատվիրած ուսումնասիրության շրջանակներում UNIQUE Forestry and Land Use GmbH-ը կիրառել է Վերականգնման հնարավորությունների գնահատման մեթոդաբանությունը (ROAM), որը մշակել են Բնության պահպանության միջազգային միությունը (ԲՊՄՄ) և Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտը (WRI) ԱՎՀ-ի պոտենցիալ ոլորտները որոշելու և ազգային ու ենթազգային մակարդակներում դրանց առաջնահերթությունը սահմանելու համար: Այս աշխատանքի սինթեզը հանդիսանում է «Լանդշաֆտի վերականգնման ռազմավարությունը և 2022-2032 թթ. գործողությունների ծրագիրը», որը սահմանում է ԱՎՀ միջամտության ութ տարբերակ, միջոցառմանն աջակցելու համար օրենսդրության և քաղաքականության մեջ պահանջվող փոփոխությունները, վարչարարությունը, համապատասխան պետական/ոչ պետական կազմակերպություններին և տեղական համայնքներին անհրաժեշտ կարողությունները, ճանապարհային քարտեզը և գործողությունների ծրագիրը 10 տարվա համար, ֆինանսավորման կարիքներն ու պոտենցիալ աղբյուրները և մոնիթորինգի ու գնահատման (Մ և Գ) շրջանակը՝ հաջողության հասնելու համար: Նախնական թիրախը 10 տարվա ընթացքում Բոննի մարտահրավերն է՝ անտառածածկելու 50,000 հա[5]:

Ռազմավարության նախագիծը շահել է պետական կառույցների, համայնքների, հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների) և այլ կազմակերպությունների միջև համապարփակ խորհրդատվությունից: 2023 թվականի կեսերի դրությամբ այս փաստաթուղթը ՀՀ կառավարության կողմից հաստատման փուլում է: Այն պաշտոնապես ընդունելու համար կառավարությունից կպահանջվի հստակ մանդատ՝ մշակելու ռազմավարություն, ռազմավարության մշակման բոլոր փուլերում պետական կառույցների կողմից գլխավոր դերի ստանձնում և ՀՀ կառավարության՝ ռազմավարությունը կյանքի կոչելու, դրան համապատասխան ֆինանսավորում տրամադրելու պարտավորություն՝ հավանաբար կախված դոնորների ռեսուրսների առկայությունից: ԱՎՀ ռազմավարության պաշտոնական ընդունումը և իրականացումը սույն փաստաթղթի հիմնական առաջարկությունն է և դրան վերապահված է ամենաբարձր առաջնահերթությունը՝ անհապաղ իրականացման իմաստով:

Խորհուրդ է տրվում ներդնել Անտառների մոնիթորինգի համապարփակ ազգային համակարգ: ԱՎՀ-ի ռազմավարության հետ կապված, բայց և գոյություն ունեցող անտառների ու վերականգնված լանդշաֆտների շրջանակն ընդգրկող այս համակարգը ներառում է անտառների ազգային գույքագրում (ԱԱԳ) և հողային ծածկույթի դասակարգում: Սա լինելու է համապարփակ մոնիթորինգային համակարգ, որը կհամապատասխանի ազգային հաշվետվողականության կարիքներին և շարունակական քաղաքականության ձևավորմանը: Ներկայումս Հայաստանի անտառների պետական գույքագրման համակարգը հիմնված է անտառների կառավարման պլանավորման տվյալների վրա, որոնք ագրեգացված են առանձին հողակտորներից, և տարբերվում է ընտրանքային հողակտորի ցանցի հիման վրա ԱԱԳ-ի վերաբերյալ տվյալների ագրեգացման պրակտիկայից: Բացի այդ, Անտառների մոնիթորինգի

[4] ԵՄ Կանաչ գործարքի և ԵՄ Կենսաբազմազանության ռազմավարություն 2030-ի շրջանակներում ԵՄ-ն պարտավորվել է տնկել 3 միլիարդ ծառ և արդեն գերազանցել է այդ նպատակը. https://environment.ec.europa.eu/strategy/biodiversity-strategy-2030/3-billion-trees_en.

[5] Ըստ շրջակա միջավայրի նախարարության անտառային քաղաքականության վարչության՝ Անտառային քաղաքականության և ռազմավարության ազգային գործողությունների ծրագիրը վերանայման փուլում է: Անտառային ոլորտում մի քանի փաստաթուղթ ունենալու փոխարեն, անտառային լանդշաֆտների վերականգնման միջոցառումները նույնպես կներառվեն են նշված փաստաթղթի մեջ:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) և Անտառների կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորումը կբարձրացնի առկա անձնակազմի և ղեկավարության արդյունավետությունը և կաջակցի կապալառուների, պայմանագրերի, սարքավորումների, ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների ընդլայնված ցուցակի կառավարմանը, որոնք անհրաժեշտ են անտառների ընդլայնման թիրախներին հասնելու համար: Նման համակարգը կուժեղացնի որակի վերահսկումը և բոլոր գործողությունների մշտադիտարկումն ու գնահատումը, ընդ որում՝ ոչ միայն մեկ նախագծի հետ կապվածները:

Առաջարկվում է հատուկ գործողությունների ծրագիր՝ էներգետիկայի, մասնավորապես գյուղական վայրերում վառելիքային աղքատության խնդիրը լուծելու համար, որտեղ վտանգված են անտառային ռեսուրսները: Վառելիքի կամ էներգիայի գնի ճգնաժամի դեպքում անտառների՝ որպես ջեռուցման վառելիքի պահուստային աղբյուրի օգտագործման դեմ պայքարելու համար անհրաժեշտ է միասնական տեսակետ: Այդ գործունեությունը կանդրադառնա ավելի լայն տնտեսական համատեքստին, այդ թվում նաև այնպիսի այլընտրանքների հեշտ հասանելիությանը, ինչպիսիք են բնական գազը, ներմուծվող փայտի (կենսավառելիքի) հարկային հաշվառումը՝ կապելով դա կանոնակարգերի բարելավված կիրարկման աշխատանքների հետ:

Հայաստանի անտառային լանդշաֆտի վերականգնման փաստաթուղթ

Ամփոփագիր

Հունիս, 2023թ

THE WORLD BANK
IBRD • IDA | WORLD BANK GROUP

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF ENVIRONMENT

CSF
CLIMATE SUPPORT FACILITY

NDC
SUPPORT FACILITY

PROGREEN